# ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ
## (վերջին երկու տարվա ծավալած գործունեության վերաբերյալ)

Ինչպես հայտնի է, փաստաբանը ևս հանդիսանում է քաղաքացիական հասարակության անդամ և իր դերն ու նշանակությունն է մշտապես ունեցել հատկապես իրավական պետության կառուցման գործում: Հանդիսանում եմ փաստաբան դեռևս 2011 թվականից:

Նկատի ունենալով պրակտիկ փաստաբան հանդիսանալու հանգամանքը և պահանջը՝ ներկայացվում են վերջին երկու տարվա ընթացքում անհատապես իրականացրած գործունեության մասին.

- դատական ներկայացուցչություն տարաբնույթ գործերով
- նաև դատական գործեր, որոնք ունեն նպատակ՝
  - ռազմավարական նշանակություն խնդիրներին լուծում տալու,
  - ինչպես արտադատական, այնպես էլ դատական պրակտիկայի փոփոխության, զարգացման,
  - ՀՀ–ում որոշ իրավունքների՝ ուշադրությունից դուրս մնացած լինելու, անտեսված կամ երկրորդական համարված հանգամանքը փոխակերպելու,
  - ուշադրությունից դուրս մնացած իրավունքների խախտման մասին բարձրաձայնելով՝ այն արժևորելու, կարևորելու ոչ պակաս, քան օրինակ՝ անձի դատական պաշտպանության և այլ հիմնարար իրավունքներն են,
  - թվային և համացանցային ժամանակաշրջանում՝ տվյալների պաշտպանության վերաբերյալ պատկերացման և մակարդակի բարձրացման և այլ խնդիրների և հարցերի վերհանում, որոնք կարևոր են և ներկայի ժամանակներում կատարվող փոփոխությունների լույսի ներքո:
- արտադատական գործունեություն, որոնք ևս կապված են մարդու իրավունքների հետ և հետևապես փաստաբանական գործունեության հետ նույնպես:

❖

*Դատական կարգով բարձրացված խնդիրների, արդեն իսկ նշված անտեսված իրավունքների պաշտպանության վերաբերյալ հարցերի մի մասը ներառում են նաև գիտական հետազոտման մեջ:*

*Զբաղվել գիտական հետազոտմամբ՝ իրավունքների տարբեր ճյուղերին, մարդու տարբեր իրավունքներին, նեղ իրավունքներին և ազատություններին վերաբերող:*

❖

*Դեռևս 2021 թվականի մայիսից առ այսօր կամավորության և հասարակական հիմունքներով, անձնական գիտական հետաքրքրությունից ելնելով, մշտադիտարկում և հետևողականություն ցուցաբերում Բարձրագույն դատական խորհրդի ինչպես՝ որպես դատարանի, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նիստերի, այնպես էլ՝ որպես վարչական մարմնի, գործունեության նկատմամբ:*

❖

*Առաջարկություններ են ներկայացվել տարբեր գերատեսչություններին, օրենքի նախագծեր ներկայացրել օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք ունեցող անձանց և մարմիններին:*

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## (հասարակական խորհրդում ներգրավման վերաբերյալ)

Նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու հայտ ներկայացնելը պայմանավորված է մի շարք գործոններով՝

- նախարարությունում ընդգրկված կառույցների հետ առնչվելը,
- նախարարության նոր մոտեցումները և որդեգրած նոր մոդելները,
- face-to-face շփմամբ գաղափարներ, մտահոգություններ և մասնագիտական կարծիքներ փոխանակելու հնարավորությունը,
- նաև բանավոր կերպով առաջարկներ, դիտարկումներ ներկայացնելը,
- նախարարությանը վերապահված ոլորտային մասով տվյալների պաշտպանության մասին հանգամանալից խոսելը, առաջակներ ներկայացնելը
- մասնագիտական փորձով և գիտելիքով կիսվելը և այլ գործոններ:

Պրակտիկ գործունեությանը զուգահեռ, տարբեր ժամանակներում տարբեր գերատեսչություններին առաջարկություններ, օրենսդրական նախագծեր ներկայացնելիս՝ փորձը ցույց է տալիս, որ գրավոր հաղորդակցությունը արդյունավետ չէ, քանի որ ըստ էության, կարճ գրելիս՝ շատ պարզ են տեսնում խնդիրը, իսկ երկար գրելիս՝ կարծես թե չեն կարդում առաջարկությունները, խորամուխ չեն լինում խնդրի էության մեջ և լուծում: Փորձը նաև ցույց է տալիս, որ ներկայացված առաջարկությունները բավարար չափով չեն ուսումնասիրվում, գիտելիքի պակաս է նկատվում, բացի ոլորտային օրենսդրության իմացությունից, այլ՝ ավելի լայնախոհ, բազմաշերտ, բազմաբնույթ

իրավական գիտելիքների բացակայության պատճառով չեն ընկալվում առաջարկությունները, իսկ բանավորությամբ գրավոր առաջարկը ավելի լայն և խորքային ներկայացնելը կրկին փորձի հիման վրա ցույց է տալիս, որ ամենաարդյունավետ միջոցներից մեկն է: Նկարագրված իրավիճակ եղել է նաև նախկինում գործող ՀՀ Ոստիկանության դեպքում՝ երբ առաջարկությունը ներկայացվում է ՀՀ Կառավարությանը, որը հասցեագրում է ըստ քաղաքականություն մշակող կառույցի, սակայն առաջարկությունները կա՛մ չեն ընկալվում, կա՛մ «անհավես», կատարողականի ապահովման նպատակով «ծիտիկ» դնելու համար անբովանդակ պատասխան է տրվում:

Նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակներից մեկն էլ նաև այն է, որ թվային, էլեկտրոնային ծառայությունների, էլեկտրոնային ստորագրությունների, անձանց անձնական տվյալների պաշտպանության, անձի ի պաշտոնե տվյալների և անձի անձնական տվյալները անհրաժեշտ են տարանջատել՝ ներառյալ էլեկտրոնային, թվային համակարգերում (պետական մարմինների, քաղաքացիների հետ գրավոր հաղորդակցման, էլեկտրոնային արդարադատության բնագավառում և այլն): Այս ամենը նաև խնդիրներ են՝ որոշ իրավական ակտերի «հին և ժամկետ անց» լինելու, ստանձնած միջազգային պայմանագրերին չհամապատասխանելու պատճառով: Այս ոլորտի մտահոգ թե՛ քաղաքացի, թե՛ փաստաբան և թե՛ գիտական հետաքրքրություն ունեցող և հետազոտող անձ՝ հարկ է նաև նշել, որ ցավոք, այս հանգամանքները ուշադրության չի արժանանում թե՛ գործադիր մարմնի կողմից և թե՛ օրենսդիր մարմնի կողմից և թե՛ դատական իշխանության կողմից և պատճառներից մեկն էլ՝ գիտելիքի կա՛մ պակասն է, կա՛մ բացակայությունը, կա՛մ էլ թերի լինելը:

Ուստի ի թիվս այլնի՝ ամենաառանցքային խնդիրը հանդիսացել է այն պատճառներից մեկը, որը ցանկություն է առաջացրել հայտ ներկայացնելու համար:

## ՀԱԿԻՐՃ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### (վերջին երեք տարիների ընթացքում Ոստիկանության կամ Մգրացիայի և քաղաքացիության ծառայության կամ Փրկարար ծառայության ոլոտներում իրացանացվող քաղաքականության վերաբերյալ )

*2024 թվականի նոյեմբերի 15-ին ՀՀ Կառավարությունն ընդունեց «Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունը և դրանից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1803-Լ որոշումը (այսուհետ՝ Որոշում):*

*Ըստ ռազմավարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը կարևորում է մի շարք ուղղություններ: Ըստ այդմ՝ կատարված մի շարք փոփոխությունների (միգրացիայի և քաղաքացիության ծառայության միասնությունը, պարեկային ծառայության հիմքը և այլն) շարունակվում են ուշադրության կենտրոնում մնալ կադրերի համալրումը, մասնագիտական պատրաստվածության բարձրացումը և զարգացումը, քրեական ոստիկանությանը և պարեկային ծառայությանը կին ծառայողների ներգրավածության շարունակականության ապահովումը, խրախուսումը, կոռուպցիայի կանխարգելումը, ծառայողների բարեվարքության կարևորությունը՝ նպաստելով հանրային վստահությանը, որոնք մասն են կազմել վերջին երեք տարիների ընթացքում կատարված բարեփոխումների և հատկապես ոստիկանության քաղաքականության մշակման կենտրոնականությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև կրթական մակարդակին և հատկապես՝ Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ստեղծմանը:*

*Վերջին երեք տարիների ընթացքում հատկանշական է նաև ջրային պարեկային ծառայության նորամուծությունը:*

*Ոստիկանության բարեփոխումների համատեքստում ներդրվել են նաև քրեական ոստիկանության ծառայությունը,ինչպես նաև պահպանվել համայնքային ոստիկանության ծառայությունը, իսկ այդ ծառայությունների ֆունկցիոնալ տարանջատումը՝ որպես ոստիկանության քաղաքականության մի մաս: Հատկապես ուշադրություն է դարձվում թե՛ համայնքային և թե՛ քրեական ոստիկանության ծառայության կարողությունների շարունակական զարգացումը:*

*Ոստիկանության քաղաքականության առանցքային մասերից է համարվում հանցավորության դեմ պայքարը, հատկապես ուշադրության է արժանի վերջին տարիներին թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեծ տարածումը և դրա դեմ պայքար տարվող աշխատանքները: Թերևս մամուլից և հատկապես Ներքին գործերի նախարարության կողմից տարածվող լուրերը վկայում են ոստիկանության հստակ քաղաքականությունը նաև ապօրինի թմրամիջոցների շրջանառության դեմ պայքարում: Սակայն այն համաչափ չէ տարածման արագությանը:*

*Ոստիկանության քաղաքականության մի մաս է կազմում և վերջին երեք տարիներին նկատելի են որոշակի փոփոխություններ ճանապարհային երթևեկության անվտանգ ապահովման բնագավառում: Նշվածի լույսի ներքո կարևոր է նշել նաև վարորդներին խրախուսելու միջոցառումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, հանրային ծառայությունների բնագավառում կատարված փոփոխությունները: Սակայն պարեկ–քաղաքացի փոխհարաբերությունները միշտ չէ, որ հարթ է և համարժեք: Շատ են դժգոհությունները պարեկների մասնագիտական գիտելիքների, շփման, վարվեցողության պարզ*

*կանոնների բացակայության, ինչպես նաև օրենքով իրենց վստահված լիազորությունների գերազնահատման մասին:*

*Ոստիկանության քաղաքականության մի մաս է կազմում նաև ընտանեկան, կենցաղային բռնության կանխարգելումը, դրա դեմ պայքարը: Համեմատության համար պետք է նշել, որ ներկայում արդեն իսկ առանձին օրենքի մակարդակում կանոնակարգված են ոստիկանության լիազորությունները՝ ի համեմատ տարիներ առաջ եղած պրակտիկային և ոստիկանության որդեգրած քաղաքականությանը և վարքագծին այդտեսակ գործերի դեպքում, սակայն այդ ուղղությամբ շարունակական և հետևողական աշխատանք են պահանջում այդ խնդիրների հանգամանքները, քանի որ անձինք խոցելի են և հարցերը շատ զգայուն:*

*Ոստիկանության քաղաքականության մաս է նաև երեխաների իրավունքների պաշտպանությունը, առաջնահերթությունը: Այդուհանդերձ, հատկապես ներկայում ապօրինի թմրամիջոցների տարածման ծավալների չափը հատկապես անչափահասների շրջանում շատ մտահոգիչ են, ինչը իր հերթին հանգեցնում է նաև երեխաների իրավունքների խախտմանը:*

*Կարևոր է նաև նշել, որ ձերբակալվածների պահման վայրերում, կարելի է ասել, բացակայում է վատ վերաբերմունքն ու խոշտանգումը, ինչը հակառակ համեմատականությամբ առկա է ոստիկանության տարբեր բաժիններում և բաժանմունքներում՝ ընդհուպ փաստաբանների նկատմամբ: Սա չի խոսում պետության ստանձնած վատ վերաբերմունքի, խոշտանգման արգելքի պարտավորության կատարման մասին:*

*Հարկ է նշել, որ 2024–2026 թվականների ռազմավարությունը մի մասով՝ շարունակականությունն է այն փոփոխությունների, բարեփոխումների և ոստիկանության քաղաքականությանը և մյուս մասով՝ ոստիկանության քաղաքականության մեկ այլ փուլ է, այլ*

կերպ ասած, ոստիկանության ոլորտում քաղաքականությունը պայմանական բաժանված է փուլերի:

Ոստիկանության քաղաքականության մաս է կազմում նաև հասարակական կարգի պահպանումը, սակայն ցավալիորեն վերջին երեք տարիներին թերևս նկատելի չեն հասարակական կարգի պահպանության բնագավառում կատարված փոփոխությունները:

Թեև ոստիկանության բնագավառում կատարված են տեսանելի փոփոխություններ, սակայն ոստիկանության բաժիններում և բաժանմունքներում փոփոխությունները տեսանելի չեն. բիրտ և անհամաչափ ուժի կիրառումը չի վերացվել ոստիկանության համակարգում, ավելին՝ անգամ ՀՀ–ի դեմ կայացված մի շարք միջազգային դատական ակտերից հետո կարծես թե ոստիկանության ծառայությունը բաժիններում և բաժանմունքներում հետընթաց է ապրում, շարունակում է արդիական մնալ հենց ոստիկանության ծառայողների կիրառված, դրսևորած վատ վերաբերմունքի, խոշտանգման մասին խոսելը: Թեև կատարված են մի շարք փոփոխություններ՝ ներառյալ ոստիկանության քաղաքականության բնագավառում, սակայն խնդիրը սկսվում է կրթական մակարդակից, անձնական հատկանիշներից և աշխատավայրերում տարիներով արմատացած վատ բարքերից: Թեև ՀՀ ներքին գործերի նախարարությունում գործում է ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչություն, սակայն այդ վարչության արդարացիության, արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ են թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների գործնական մեխանիզմների առկայության ապահովում,ինչը այսօր բացակայում է:

Չկասկածելով Ներքին գործերի նախարարության ազնիվ ցանկություններին՝ այնուամենայնիվ, գործադրված ջանքերն ու տարաբնույթ հեռանկարային ռազմավարությունների, օրենսդրական նախագծերի մշակումը չի կարող լրացնել, օժանդակել

*անգամ ամենալավ օրենքների կիրառումը բոլորի նկատմամբ՝ առանց բացառության և խտրականության: Ուստի շարունակական բարեփոխումների համատեքստում շատ կարևոր է նաև օրենքների կիրառման առումով այնպիսի մեթոդաբանության ներդրում, որը կարող է վերացնել տարիներ ի վեր արմատավորված վատ բարքերը, հատկապես ոստիկանության բաժինների և բաժանմունքների ծառայողների կողմից:*

*Պետք է նաև նշել, որ թեև պարեկային ծառայողները անցնում են արագացված կարճաժամկետ դասընթացներ, որոշակի փուլեր, սակայն մասնագիտական առումով այն բավարար չէ, քանի որ երբ իրավիճակը ոչ ստանդարտ է լինում, պարեկային ծառայողը՝ բացի իր ստանդարտ սովորածից, այլ իրավաբանական գիտելիքներ չունի, այլ կերպ ասած, բազային գիտելիքի պակասը և միգուցե նաև շարունակական կրթության թերի կամ անբավարար լինելը նկատելի է արդեն իսկ գործնականում:*